UDC 371.3
DOI 10.46991/educ-21st-century.v6.i1.110

«ԲԱԶՄԱՆԻՍՏ» (ՊՐԻԶՄԱ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արզումանյան Արմենուհի
բան. գիտ. թեկնածու, դոցենտ
Երևանի պետական համալսարան,
Հայաստանի Հանրապետություն
armenuhiarzumanyan@mail.ru
https://orcid.org/0000-0002-8482-7683

Ամփոփում

««Բազմանիստ» (պրիզմա) ուսուցման ժամանակակից մեթոդի կիրառման առանձնահատկությունները» վերտառությամբ հոդվածում փորձել ենք ցույց տալ վերոնշյալ մեթոդի կիրառման յուրահատկությունները՝ պայմանավորված ուսուցանվող նյութի բնույթով և գրողի պատկերային համակարգի ինքնատիպությամբ, աշակերտների տարիքային խմբերով: Դիտարկել ենք «Բազմանիստ» մեթոդի կիրառման մի քանի մոտեցումներ՝ ըստ մեթոդի սկզբունքային առանձնահատկությունների:

Հոդվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել վերոնշյալ մեթոդի էությունը, տվյալ ձևաչափով նյութի ուսուցման սկզբունքները՝ մատնանշելով ու հիմնավորելով դասավանդման այդ եղանակի համապատասխան առանձնահատկություններով պայմանավորված առավելությունները, ուսուցման նպատակից բխող յուրահատկությունները:

Հետազոտության նորույթն է «Բազմանիստ» մեթոդի կիրառման տարբեր մոտեցումների, դրանց առանձնահատկությունների դիտարկումը: Վերոնշյալ ուսուցման եղանակով քննարանվել են գրական երկի վերլուծության արդյունավետ միջոցները, տաբեր հեղինակների՝ նույն թեման արծարծող ստեղծագործությունների զուգադրմամբ շեշտադրվել են գրական պատկերի գաղափարական, խոհափիլիսոփայական, հոգեբանական շերտերը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորում է ուսուցման ժամանակակից մեթոդաբանության պահանջներով դիտարկել գրական երկերի ուսուցման գործընթացը՝ այն դարձնելով ժամանակակից կրթական ծրագրերին համահունչ: Հոդվածում ցույց ենք տվել «Բազմանիստ» ուսուցման մեթոդի՝ տարբեր մոտեցումներով կիրառման արդյունավետությունը, դրանց օգնությամբ գեղարվեստական ստեղծագործության առավել բովանդակային և բազմաշերտ ուսումնասիրության հնարավորությունները:

Հետազոտության արդյունքում հասել ենք հետևյալ եզրահանգումների. «Բազմանիստ» ուսուցման մեթոդը նպաստում է ուսուցանվող նյութի առավել խորքային վերլուծությանը, աշակերտների համեմատական-վերլուծական խոսք կառուցելու հմտությունների ձևավորմանը, պատկերավոր մտածողության զարգացմանը, գեղարվեստական ստեղծագործության լայնածավալ ներկայացմանը, դասը առավել հետաքրքիր և բովանդակալից դարձնելուն:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ *համեմատական-վերլուծական մտածողություն, ենթագիտակցական ոլորտ, զուգադրական կապեր, գաղափարական հարցադրումներ, խոհափիլիսոփայական շերտեր:*

Հոդվածի նպատակն է հետաքրքիր դիտարկումներով բացահայտել «Բազմանիստ» ուսուցման մեթոդի էությունը, դրա՝ տարբեր մոտեցումներով կիրառման հնարավորու-

թյունները, որոնք պայմանավորում են ուսուցանվող նյութի բազմաշերտ ուսումնասիրություն:

Հետազոտության նորույթը. բացահայտվել են «Բազմանիստ» ուսուցման մեթոդի կիրառման առանձնահատկությունները, մեթոդի՝ որպես ուսուցման հետաքրքիր ձևի առավելությունները՝ նյութի առավել խորքային վերլուծության հնարավորություն, ուսուցանվող նյութի համակարգում և ամփոփում, գրողի պատկերային համակարգի ինքնատիպության շեշտադրում:

Մեթոդական գրականության մեջ կան վերոնշյալ հիմնախնդրին նվիրված մի շարք գիտական հետազոտություններ («Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ», ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, ք. Վանաձոր, 2008, «Ուսուցման արդյունավետ հնարներ», Ս. Խաչատրյան, «Էր. Ֆ. Էբերտ» հիմնադրամ, Հայաստան, 2020, Valmont W., Technology for literacy teaching and learning. New York. Houghton Mifflin Company, 2006, Allington R. And Cunningham P., Classrooms that work. Boston, Allyn and Bacon, 2004): Նրանք փորձել են յուրովի ներկայացնել ուսուցման ժամանակակից մեթոդներին բնորոշ առանձնահատկությունները, կիրառման յուրահատկությունները:

Հիմնական նյութի շարադրանք: Ուսուցման ժամանակակից գործընթացում ուսուցանվող նյութի մատուցման, ամրապնդման կարևորագույն ձևերից է «Բազմանիստ» մեթոդը:

Վերոնշյալ մեթոդը ուսուցման գործընթացում հետաքրքիր ու արդյունավետ նշանակություն ունի: «Այն խրախուսելու, ազատ ու անկաշկանդ, ակնառու-պատկերավոր մտածողությունը, նաև մտածողության ընթացքը պատկերավոր դարձնելու պարզ միջոց է: Մեթոդի հիմնական նպատակը ներկայացվող երևույթի, հասկացության, գաղափարի վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած զուգորդական կապերի վերհանումն է և արձանագրումը»[1, էջ 543]:

«Բազմանիստ» մեթոդը գծագրական դասակարգչի տեսք ունի: Մեթոդի կիրառումը ընդգրկում է հետևյալ քայլերը.

ա) ուսուցիչը գրատախտակին գծում է մի ուղղանկյուն, որի մեջ գրում է այն բառը կամ բառակապակցությունը, որը ամբողջացնում է այն խնդիրը կամ հարցադրումը, որը պետք է պարզաբանել,

բ) ուղղանկյան ներքևի կողմից իջնում են ևս երկու ուղղանկյուններ, որոնցում գրանցվում են հիմնաբառից բխող այլ բառակառույցներ, որոնք աշակերտները հնչեցնում են շատ արագ, առանց երկար մտածելու,

գ) երկու ուղղանկյուններից նորից իջնում են ևս երկու ուղղանկյուններ, որտեղ լրացվում են վերևում նշված բառերից բխող ընդհանրական բնութագրումներ,

դ) 4-րդ քայլից բազմանիստը պետք է սկսի փակվել և աստիճանաբար նեղանալ, այդ պատճառով նախորդ երկու բառակառույցներից պետք է բխեցնել ամփոփող գնահատոմ պարունակող մեկ բառ կամ բառակապակցություն,

ե) 5-րդ քայլի ժամանակ բազմանիստը փակվում է. վերջին երկու ուղղանյուններից իջնում է վերջնական ուղղանկյունը, որում նշվում է այդ երկու բնութագրումների հանրագումարային ամբողջացումը, որը պետք է ներքին տրամաբանությամբ կապված լինի բազմանիստի հիմնաբառին:

«Բազմանիստ» մեթոդի կիրառումը կարելի է կատարել մի քանի շերտերի բացվածքով [3, 4, 5, 6…]՝ պայմանավորված ուսուցանվող խնդրի բարդությամբ, հարցադրումների ընդգրկվածության աստիճանով, աշակերտների տարիքային խմբերով: Սակայն ամենատարածվածը եռաշարք բազմանիստն է:

«Բազմամիստ» մեթոդը կարելի է կիրառել երկու սկզբունքներով:

1. Տրվում է հարցադրումն ընդհանրացնող մեկնաբառը, ու առաջադրվող խնդրի, գաղափարական հարցադրման վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած զուգորդական կապերի վերհանմամբ և արձանագրմամբ ամբողջացվում է բազմանիստ գծապատկերը:

2. «Բազմանիստը» կարող է լինել նաև ուղղորդված. այս դեպքում միաժամանակ տրվում են և՛ մեկնաբառը, և՛ վերջնաբառը. այն արդեն լրացվում է ոչ թե ենթագիտակցաբար, այլ տրամաբանորեն: Այս սկզբունքը կարելի է կիրառել նյութի ամփոփման փուլում:

«Բազմանիստ» ուսուցման մեթոդը կարելի է կիրառել մի քանի մոտեցումներով ուսուցանվող նյութի և՛ մատուցման, և՛ ամփոփման փուլում՝ պայմանավորված ուսուցանվող նյութի բնույթով, թեմատիկ ընդգրկումով, աշակերտների տարիքային խմբերով, նրանց իմացական մակարդակով:

1-ին մոտեցում

«Բազմանիստ» մեթոդի՝ առաջին սկզբունքով կիրառումը ավելի ցանկալի է տարրական և միջին դասարաններում, այս դեպքում խորքային վերլուծություններ չեն կատարվում, այլ ենթագիտակցական ոլորտից բխող պատասխաններով արագ լրացվում է բազմանիստի գծապատկերը: Օրինակ՝ տարրական դասարաններում կարելի է մեկնաբառ վերցնել «հայրենիք» բառը և ամբողջացնել աղյուսակը հետևյալ կերպ՝



Այսինքն՝ ուսուցիչը նախօրոք պատրաստված հարցերով փորձում է ամբողջացնել «հայրենիք» հասկացության արժեքը՝ աշակերտների կողմից արագ տրված պատասխանների միջոցով ընդհանրացնելով աշակերտների պատկերացումները հայրենիքի գնահատումների շուրջ: Բազմանիստի մի քանի շերտով բացվածքների օգնությամբ հայրենիք-Հայաստան մեկնաբառ-վերջնաբառ բառակառույցների միջնատիրույթում տեսանելի են դառնում աշակերտների պատկերացումները հայրենիքի մասին, որոնք պետք է վերջում ամբողջացվեն ուսուցչի ամփոփիչ խոսքում՝ հայրենիքի՝ որպես թանկ ու նվիրական արժեքի շեշտադրմամբ: Նույն սկզբունքով կարելի է որպես մեկնաբառ ընտրել «ընտանիք», «ընկերություն» բառերը՝ բազմանիստի բազմաշերտ տրոհումների շնորհիվ արժևորելով այդ հասկացությունները:

2-րդ մոտեցում

Միջին դասարաններում կարելի է բազմանիստի օգնությամբ ընդլայնել աշակերտների բառապաշարը, զարգացնել նրանց պատկերավոր մտածողությունը: Գրական երկի ամփոփման փուլում, մեկնաբառ վերցնելով ստեղծագործության գաղափարական

շեշտադրումը ընդհանրացնող բարակառույց կամ բառապատկեր, աշակերտներին հանձնարարել հեղինակային բնութագրումների, բառահյուսվածքների, պատկերակերտման միջոցների օգնությամբ պետք է լրացնել բազմանիստի շերտերը: Համատեղ ուժերով հնարավորինս տեսանելի կդառնան գրողի բառարվեստի առանձնահատկությունները, գեղեցիկ ու բազմախորհուրդ բառային կառույցները կտպավորվեն աշակերտների մոտ: Կարելի է այդ դասին կիրառել նաև «5-րոպեանոց (կամ 10-րոպեանոց) շարադրություն» ուսուցման եղանակը, աշակերտներին հանձնարարել 5 կամ 10 րոպեների ընթացքում գրել շարադրություն՝ վերնագիր ընտրելով բազմանիստի մեկնաբառը, պարտադիր կիրառելով հեղինակային բառապատկերներն ու պատկերակերտման միջոցները: Նման աշխատանքը կօգնի աշակերտների բառապաշարի հարստացմանը, ստեղծագործական հմտությունների և պատկերավոր մտածողության զարգացմանը: Օրինակ՝ Տերյանի սիրային քնարերգությունը ուսուցանելիս, ավարտելով «Մթնշաղի անուրջներ» ժողովածուի վերլուծական աշխատանքները, կարելի է «Բազմանիստ» մեթոդի օգնությամբ տերյանական պատկերակերտման միջոցներով լրացնել բազմանիստի գծապատկերը՝ մեկնաբառ վերցնելով «տխրաթախիծ աշուն» բառակապակցությունը, իսկ վերջնաբառ՝ «պայծառ գարուն» բառակառույցը: Ժողովածուն սկսվում է աշնանային տրամադրության տխրադալուկ գույներով, այնուհետև տեսանելի են դառնում աշնանային անձրևի, դեղնակարմիր տերևների հեզանազ խաղը, տերևաթափի մեղմասահ ելևէջումը, որոնց շաղախվում են մարդկային հոգու ցավի, կարոտի, բաժանման ներքին տագնապները… Սակայն ժողովածուն ավարտվում է գարնան զարթոնքի թարմաշունչ բույրով՝ որպես լավատեսության խորհրդանիշ:

Զուգել ես նորից դաշտ, անտառ ու լեռ,
Գարո՛ւն, ամեն տեղ նոր կյանք ես վառել.
Իմ սրտում էլ ես թևերըդ փռել,
Իմ հոգում էլ ես հրդեհել նոր սեր [104]:

Բազմանիստի միջանկյալ շերտերը կարելի է լրացնել տերյանական հետևյալ բառապատկերներով՝ «անուրջ կույս, վիատության հեկեկանք, լքված սիրտ, անծայր կարոտ, վարսաթափ ուռի, երկնածին անուրջներ, կարմիր վերջալույս, ոսկեղեն արտ» և այլն: Այնուհետև աշակերտներին հանձնարարել գրել 5-10-րոպեանոց շարադրություն՝ վերնագիր ընտրելով տերյանական պատկերը՝ «Աշնան տրտմություն»: Նման դասընթացը կլինի հետաքրքիր, արդյունավետ, կնպաստի աշակերտների պատկերավոր մտածողության զարգացմանը:

3-րդ մոտեցում

Ըստ «Բազմանիստ» մեթոդի կիրառման երկրորդ սկզբունքի՝ բարձր դասարաններում կարելի է բազմանիստը լրացնել՝ նախապես տալով և՛ մեկնաբառը, և՛ վերջնաբառը: Այն կարելի է կիրառել նյութի ամփոփման փուլում: Օրինակ՝ Գ. Զոհրապի «Երջանիկ մահը» նովելի ուսուցման ամփոփման փուլում կարելի է երջանիկ մահվան փիլիսոփայության զոհրապյան շեշտադրումները ամբողջացնել բազմանիստի մի հատվածում, իսկ երկրորդ հատվածում դիտարկել երջանիկ մահվան այլ փիլիսոփայական մոտեցում՝ հանուն հայրենիքի մահը գնահատելով երջանիկ մահ: Ըստ Գ. Զոհրապի «Երջանիկ մահը» նովելի՝ անբուժելի հիվանդությամբ տառապող երիտասարդ կնոջը բժիշկը խորհուրդ էր տվել ապրել հանգիստ կյանքով, դեղորայքային բուժմանը զուգահեռ դադարեցնել մարդաշատ շփումները՝ փոքր-ինչ երկարեցնելով երկրային ճանապարհի ընթացքը: Սակայն երիտասարդ կինը գերադասում է կարճ, բայց ապրված, սիրո վայելումի արբունքից հագեցած վերջին օրերի ընթացք, քան հիվանդությունից օր օրի դալ-

կացած, խամրած, տկարացած ուղի։ Նա, անտեսելով բժշկի խորհուրդները, կյանքի վերջին օրերն անցկացնում է՝ կենսասիրության իր բոլոր զգացողությունները հագեցնելով, և մահանում է պարահանդեսի ժամանակ սիրած տղայի գրկում պարելիս… Նովելն ավարտվում է հետաքրքիր արտասյուժետային պատկերակառույցով. «Հիվանդություններու, ցավերու մեջ չտառապեցավ. ծերությունը չփճացուց իր շնորհները. պաշտելի ու պաշտված կինը մնաց մինչև վերջի վայրկյանին ու ընդհանուր զմայլումով մը ողջունված, իր սիրած տղուն թևին վրայեն գնաց հեռացավ անիկա։ Բաժակի մը պես, որ կոչունքի մը սեղանի վրա, ցնծության մաղթանքներու, բախումներու մեջ կփշրվի, փոխանակ դուրսը սպասավորներու ձեռքով, լվացքի աղտոտ ջուրին մեջ օր մը կոտրելու անհետանալու, այս կինն ալ էն շնորհագեղ պատկերի մը մեջ գերագույն երջանկությունը զգացած ու պարգևած ժամուն անհետացավ» [2, էջ 87]։ Ուսուցիչը պետք է բացատրի, որ նովելի գաղափարական հարցադրումը ներկայացված է բաժակի խորհրդանշական իմաստային շերտերում. եթե բաժակը պետք է կոտրվի, թող այն լինի ոչ թե սպասուհու ձեռքին կեղտաջրի մեջ լվանալիս, այլ կենացի այն վեհագույն պահին, երբ բաժակների զնգոցից լսելի է դառնում սրտաբուխ ցանկությունների ու մաղթանքների տարափը… Եթե երկրային կյանքի ավարտը ճակատագրով սահմանված է երիտասարդ տարիքում, ուրեմն թող այն լինի գեղեցիկ ակնթարթի մեջ քարանալով, հավերժության ճանապարհի սկիզբը լինի հոգեհմա հույզերի ալիքների մեջ…:

Նովելի վերլուծությունից հետո ուսուցիչը կարող է մեկնաբառ ընտրել «**երջանիկ մահ**» բառակառույցը, իսկ վերջնաբառ՝ «**հոգեսլացում**» բառը։ Այնուհետև բազմանիստի շերտերի բացվածքով խոհափիլիսոփայական գնահատումների ամբողջացմամբ կարելի է լրացնել միջանկյալ շերտերը՝ շեշտադրելով, որ երկրային կյանքում հոգեփլուզումից՝ մահվան շնչառություն, դեպի հոգեսլացում՝ տիեզերական հավերժություն, կան հույզերի հոգեպարար հանգրվաններ, որոնք կգունավորեն երկրային կյանքի վերջին ակնթարթը…:

Այնուհետև ուսուցիչը, բացատրելով հանուն հայրենիքի նահատակության սրբազան խորհուրդը, կարող է երջանիկ մահվան փիլիսոփայությունը այլ մեկնությամբ դիտարկել՝ պահպանելով նույն մեկնաբառն ու վերջնաբառը, իսկ միջանկյալ շերտերը լրացնել երջանիկ մահվան հանուն հայրենիքի զոհողության կենսափիլիսոփայության դիրքերից։ Ուսուցիչը, խոսելով հայ ժողովրդի բազմադարյան պատմության, նրա դժվարին ճանապարհի, օտար հողմերի դեմ անվերջանալի մաքառումների մասին, պետք է նշի, որ հայոց լինելիության գրավականը նրա քաջարի զավակների սրբազան պայքարն է եղել, հայրենի հողի համար նահատակության պատրաստակամությունը, աննկուն կամքն ու ոգին…:

Ուսուցիչը կարող է Մ. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունից մեջբերված խոսքերով ամբողջացնել հանուն հայրենիքի զոհողության վեհագույն խորհուրդը.

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնե.
Բայց երանի՜, որ յուր ազգի
Ազատության կզոհվի [5, էջ 34]:

Ուսուցիչը, ամփոփելով բազմանիստի վերջնաբառի («հոգեսլացում») խորհուրդը, պետք է բացատրի, որ երկու դեպքում էլ մահվան հետ առերեսման այդ կետում մարդը հաղթում է մահվանը. մի դեպքում սիրելի գրկում հավերժության ճանապարհին քարանալը, մյուս դեպքում՝ հայրենիքի փրկության համար հայրենի հողին հավերժ փարվելը

մահվան հաղթանակ են, որովհետև այդ կետում մարդկային հոգին յուրօրինակ հոգեսլացում է ունենում դեպի տիեզերական տարածքներ, որտեղ հոգին տիեզերանում է, իսկ տիեզերքը՝ հոգիանում...:

Երջանիկ մահվան խոհափիլիսոփյական գնահատումները բազմանիստի գծապատկերով կստանան հետևյալ տեսքը՝



4-րդ մոտեցում

«Բազմանիստ» մեթոդի կիրառմամբ հետաքրքիր դիտարկումներ կարելի է կատարել երկու տարբեր հեղինակների՝ նույն թեման արծարծող ստեղծագործությունների զուգադիր վերլուծությամբ: Օրինակ՝ . Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի ուսուցման ժամանակ կարելի է գործի անմահության թումանյանական փիլիսոփայությունը զուգադրել Ա. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքում նույն խնդրի շեշտադրմանը զուգահեռ: Վերոնշյալ պոեմում Հ. Թումանյանը բերում է գործի անմահության գաղափարը՝ շեշտադրելով լավ և վատ գործերի միշտ հիշվելու հանգամանքը: Ուսուցիչը պոեմի սյուժետային զարգացումների դիտարկումներով պետք է ցույց տա թումանյանական շեշտադրումը՝ կապված մարդկային գործի արժևորման հավերժական ընթացքի հետ: Թումանյանը ընդգծում է, որ բոլոր մարդիկ այս կյանքում հյուր են, անցողիկ է մարդ արարածի երկրային կյանքը. հերթով բոլորը գալիս և անցնում են այս անցավոր աշխարհից, միայն մարդու կատարած գործի մասին հիշողություններն են մնում: «Երնեկ նրան, ով իր գործով կապրի անվերջ, անդադար» [3, էջ 288]: Ուրեմն պետք է ապրել այնպես, որ քո թողած հետքը բարու, գեղեցիկի, ազնիվ ձգտումների ու մարդկային վեհ նկարագրությամբ գնահատվի:

Ուսուցիչը գործի անմահության թումանյանական փիլիսոփայությանը կարող է զուգադրել Ա. Իսահակյանի «Համբերանքի չիբուխը» պատմվածքի հերոսի հետաքրքիր համեմատությունը՝ այդ գաղափարի հետ կապված: Օհան ամին, ճաշակելով կյանքի դժվարություններն ու անարդարությունները, մարդու անցած ճանապարհը գնահատում է հետևյալ կերպ. «–Մարդը գնացական է,– ամփոփեց իր մտքերը Օհան ամին,– նրա լավ գործը՝ մնացական. ըսել է՝ ինքն է մնացական: Ա՛յ, խոսքի օրինակ, էս շաքար գցեցիր չայի մեջ, հալավ, կորավ, չկա, բայց այն անուշացավ: Էնպես էլ լավ մարդը կմեռնի, բայց նրա լավ գործը աշխարքը կանուշացնե: Թե չէ առանց լավ մարդու աշխարքը շատ դառն է՝ օձի լեղի…» [4, էջ 26]: Այնուհետև ուսուցիչը, հիմնվելով մեծ գրողների արտահայտած գաղափարական հարցադրումների վրա, կարող է կյանքից վերցրած տարբեր օրինակներով ընդգծել գործի անմահության գաղափարի հավերժական խորհուրդը. պետք է այնպես ապրել, որ անցածդ ուղին լուսավոր հետք թողնի, որ կյանքիդ ճանա-

պարհին բարությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, մարդասիրությունը, նվիրվածությունը, գթառատությունը այնքան շատ լինեն, որ «շաքարի նման հալվելով» քաղցրացնեն քո և քեզ շրջապատող մարդկանց կյանքը, որ թողածդ հետքը արևաբույր ու արևաշող լինի…. Հետո կարելի է լսել աշակերտների կարծիքները՝ հարցնելով, թե նրանցից ով կյանքի այս փուլում ինչ գեղեցիկ և վեհ արարքներ է կատարել: Վստահ եմ, որ նման քննարկումներից հետո աշակերտների մեջ արժեհամակարգային որոշակի փոփոխություններ կլինեն, նրանք նորովի կնայեն իրենց անցած և անցնելիք ճանապարհին՝ արժևորումների նոր մոտեցումներով պատկերացնելով ապագա ուղին: Իսկ դասը կարելի է ավարտել բազմանիստի հետևյալ գծապատկերով՝



Այսպիսով՝ «Բազմանիստ» մեթոդի տարբեր մոտեցումներով կիրառումը օգնում է ուսուցանվող նյութի խորաթափանց ուսումնասիրությանը, նպաստում է աշակերտների պատկերավոր մտածողության զարգացմանը, վերլուծական հմտությունների ձևավորմանը, աշխարհայացքային ընդլայնումներին:

"MULTIFACETED" / PRISM / APPLICATION OF THE MODERN TEACHING METHOD

Arzumanyan Armenuhi
Candidate of Philological Sciences, Associate Professor
Yerevan State University,
Republic of Armenia,
armenuhiarzumanyan@mail.ru

Summary

In the article entitled "Features of the application of the modern polyhedron /prism teaching method", we tried to show the features of the application of the above method, due to the nature of the taught material and the originality of the writer's imaginative system, age groups of students. We have considered several approaches to the use of the "multisensory" method in accordance with the fundamental features of the method.

The purpose of the article is to reveal the essence of the above-mentioned method with the help of interesting observations, principles of teaching material in this format, indicating and justifying the advantages due to the relevant features of this method of teaching, the features arising from the purpose of learning.

The novelty of the research lies in the consideration of various approaches to the application of the "Multimetric" method, their features. In the above-mentioned teaching method, effective means of analyzing a literary work were considered, by comparing the works of different authors touching on the same topic, the ideological, philosophical and psychological layers of the literary image were.

As a result of the research, we came to the following conclusions: the "multifaceted" teaching method contributes to a deeper analysis of the taught material, the formation of students' skills in building comparative analytical speech, and the development of figurative emphasized.

Keywords and idioms: *comparative analytical thinking, the sphere of the subconscious, comparative connections, ideological formulations of questions, philosophical layers.*

ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ СОВРЕМЕННОГО МЕТОДА ОБУЧЕНИЯ – «МУЛЬТИСЕНСОРНОГО» (ПРИЗМА)

Арзуманян Арменуи
кандидат филологических наук, доцент
Ереванский государственный университет,
Республика Армения
armenuhiarzumanyan@mail.ru

Аннотация

В данной статье мы попытались показать особенности применения мультисенсорного метода (методы призмы), обусловленного характером преподаваемого материала и оригинальностью образной системы писателя. Мы рассмотрели несколько подходов к использованию «мультисенсорного» метода в соответствии с принципиальными особенностями метода.

Цель статьи – раскрыть суть мультисенсорного метода с помощью интересных наблюдений, анализа принципов преподавания материала в данном формате, с указанием и обоснованием преимущества, соответствующих особенностей этого метода обучения, вытекающих из цели обучения.

Новизна исследования заключается в рассмотрении различных подходов к применению «мультисенсорного» метода, их особенностей. При применении рассматриваемого метода обучения были рассмотрены эффективные средства анализа литературного произведения путем сопоставления произведений разных авторов, затрагивающих одну и ту же тему, были подчеркнуты идеологические, философские и психологические слои литературного образа.

Актуальность исследования обусловливает рассмотрение процесса изучения литературных произведений в соответствии с требованиями современных методик преподавания, приведение его в соответствие с современными образовательными программами. В статье мы продемонстрировали эффективность применения метода «мультисенсорного» обучения с различными подходами, возможности более содержательного и многоуровневого изучения с их помощью художественного произведения.

В результате исследования мы пришли к следующим выводам: «мультисенсорный» метод обучения способствует более глубокому анализу преподаваемого материала, формированию у учащихся навыков построения сравнительно-аналитической речи, развитию образного мышления, широкому представлению художественного произведения, проведению более интересного и содержательного урока.

Ключевые слова: *сравнительно-аналитическое мышление, сфера подсознания, сопоставительные связи, идеологические постановки вопросов, философские слои.*

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղաջանյան Զ., Հայոց լեզվի ուսուցման և խոսքի մշակույթի ձևավորման մեթոդիկա, «Նաիրի» հրատ., Երևան, 2021։
2. Զոհրապ Գ., Երկեր, «Խորհրդային գրող» հրատ., Երևան, 1989։
3. Թումանյան Հ., Ընտիր երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1985։
4. Իսահակյան ., Երկերի ժողովածու, հ. 4, «Հայաստան» հրատ., Երևան, 1975։
5. Նալբանդյան Մ., Երկեր, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1985։
6. Տերյան Վ., Բանաստեղծություններ, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1985։

Получено: 01.03.2024 *Received: 01.03.2024*
Рассмотрено: 08.03.2024 *Reviewed: 08.03.2024*
Принято: 10.05.2024 *Accepted: 10.05.2024*

© The Author(s) 2024
This work is licensed under a Creative Commons Attribution-Non Comercial 4.0 International License